

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆԻՍ

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սեպական համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարթում ենք հաջողություն:

1

Ո՞ր պնդումն է ճիշտ գորտի արյունատար համակարգի վերաբերյալ.

- 1) գլխուղեղը ստանում է խառը արյուն
- 2) օրգաններում և հյուսվածքներում ածխաթթու գազով հարստացած արյունը լցվում է ձախ նախասիրտ
- 3) մաշկից եկած թթվածնով հարուստ արյունը լցվում է աջ նախասիրտ
- 4) թոքերից եկած թթվածնով հարուստ արյունը լցվում է աջ նախասիրտ

2

Զկների շնչառական համակարգի ո՞ր կառուցվածքում է կատարվում գազափոխանակությունը.

- 1) խոհիկային աղեղներում
- 2) խոհիկային առեջներում
- 3) խոհիկային կափարիչներում
- 4) խոհիկային թերթիկներում

3

Որո՞նք են խոլերա հիվանդության հարուցիչները.

- 1) վիրուսները
- 2) բակտերիաները
- 3) նախակենդանիները
- 4) բակտերիաֆագերը

4

Ինչի՞ց են ստանում պենիցիլին դեղամիջոցը.

- 1) հաբեթասնկից
- 2) խմորասնկից
- 3) վրձնասնկից
- 4) մուկորից

5

Ո՞ր պնդումն է ճիշտ լճախսխունջի վերաբերյալ.

- 1) բաժանասեռ է
- 2) եռաշերտ խեցու արտաքին շերտը ճենապակյա է
- 3) ունի բաց արյունատար համակարգ
- 4) շնչում է խոհիկներով

**6** Ո՞ր կենդանին չունի կոյանոց.

- 1) մուկը
- 2) լճագորտը
- 3) բաղակսուցը
- 4) ճարպիկ մողեսը

**7** Ի՞նչ դեր ունի մակարդակորդը.

- 1) շնչառության պահին նպաստում է սննդագնդիկի թափանցմանը շնչափող
- 2) կլլման պահին խոչընդոտում է սննդագնդիկի թափանցմանը շնչափող
- 3) կլլման պահին նպաստում է սննդագնդիկի թափանցմանը շնչափող
- 4) շնչառության պահին խոչընդոտում է սննդագնդիկի թափանցմանը կերակրափող

**8** Ո՞ր միջավայրում են գործում ածխաջրերը ճեղքող ֆերմենտները մարդու օրգանիզմում.

- 1) թույլ հիմնային և հիմնային
- 2) միայն թթվային
- 3) միայն խիստ հիմնային
- 4) թույլ հիմնային և թթվային

**9** Ինչո՞վ է պայմանավորված մարդու օրգանիզմում արյան հոսքի արագության աստիճանական նվազումը զարկերակներում.

- 1) զարկերակների պատերի առաձգականությամբ
- 2) մազանոքների լուսանցքների ընդհանուր մակերեսի համեմատ երակների լուսանցքների ավելի մեծ ընդհանուր մակերեսով
- 3) մազանոքների և երակների լուսանցքների ընդհանուր մակերեսների նվազումով
- 4) զարկերակների լուսանցքների գումարային մակերեսի աճով

**10** Ո՞ր զգայարանից են նյարդային ազդակները հասնում մարդու մեծ կիսագնդերի կեղևի քունքային բլթի ներքին մաս.

- 1) հավասարակշռության
- 2) մաշկամկանային
- 3) հոտառության
- 4) լսողական

**11 Ի՞նչ դեր է կատարում լեղին մարդու օրգանիզմում.**

- 1) նպաստում է ճարպերի էմուլսացմանը և ներծծմանը
- 2) թուլացնում է աղիների շարժողական ակտիվությունը
- 3) խթանում է նեխսման գործընթացները
- 4) արգելակում է մարտողական ֆերմենտների արտադրությունը

**12 Ի՞նչ է կատարվում մարդու օրգանիզմում միջավայրի ցածր ջերմաստիճանային պայմաններում.**

- 1) մեծանում է ջերմաստվությունը
- 2) մաշկի արյունատար անորթները լայնանում են, և փոքրանում է արյան հոսքի արագությունը
- 3) նեղանում են մաշկի մազանոթների լուսածերպերը
- 4) աճում է դեպի մաշկ հոսող արյան քանակը

**13 Ի՞նչ է արյան շիճուկը.**

- 1) ձևավոր տարրերից գուրկ պլազմա
- 2) պլազմայի կազմի մեջ մտնող ջուր
- 3) ֆիբրինոգենից գուրկ պլազմա
- 4) պլազմայի կազմում անօրգանական նյութերի ջրային լուծույթ

**14 Ի՞նչ է դիտվում մարդու օրգանիզմում B<sub>2</sub> թերպիտամինոզի դեպքում.**

- 1) արյունագեղումներ, հավկուրություն
- 2) ռախիտ, մկանային ցավեր
- 3) սիրտ-անորթային և նյարդային համակարգերի աշխատանքի խանգարում
- 4) տեսողության խանգարում, բերանի լորձաթաղանթի ախտահարում

**15 Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում պայմանական ռեֆլեքսների կենտրոնները.**

- 1) գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում
- 2) վեգետատիվ նյարդային համակարգի հանգույցներում
- 3) ողնուղեղային հանգույցներում
- 4) ողնուղեղի գորշ նյութի հետևի եղջյուրներում

16

Ո՞ր հորմոնի հավելյալ քանակն է չափահաս մարդու մոտ առաջացնում ակրոմեգալիա հիվանդությունը.

- 1) աղբենալինի
- 2) թիրօքսինի
- 3) գլյուկագոնի
- 4) աճի հորմոնի

17

Սպիտակուցային մոլեկուլի առաջացման ժամանակ ամինաթթուների միացումը տեղի է ունենում ազատված վալենտականության հաշվին.

- 1) մի ամինաթթվի ռադիկալ խմբի և մյուս ամինաթթվի կարբօքսիլ խմբի միջև
- 2) մի ամինաթթվի ամինախմբի և մյուս ամինաթթվի ամինախմբի միջև
- 3) մի ամինաթթվի ռադիկալ խմբի և մյուս ամինաթթվի ամինախմբի միջև
- 4) մի ամինաթթվի կարբօքսիլ խմբի և մյուս ամինաթթվի ամինախմբի միջև

18

Ի՞նչ գործընթաց է տեղի ունենում նիտրիֆիկացման ընթացքում.

- 1) սպիտակուցի քայլայում՝ ամոնիակի առաջացումով
- 2) ազոտային թթվի օքսիդացում մինչև ազոտական թթու
- 3) ազոտական թթվից ազոտային թթվի առաջացում
- 4) ազոտական թթվի վերականգնում մինչև ամոնիակ

19

Ո՞ր նյութն է T4 քակտերիաֆազից քակտերիա անցնում, երբ վիրուսը վարակում է քակտերիային.

- 1) ածխաջուրը
- 2) սպիտակուցը
- 3) լիպիդը
- 4) նուկլեինաթթուն

20

Կապտականաչ ջրիմուտներին բնորոշ է.

- 1) անմիջապես ցիտոպլազմայում գտնվող ԴՆԹ-ի առկայությունը
- 2) բջջապատի բացակայությունը
- 3) ձևավորված կորիզի առկայությունը
- 4) պլաստիկների առկայությունը

**21**

**Ինչո՞ւ է գենետիկական կողը համարվում միանշանակ և ունիվերսալ քանի որ՝**

- 1) գեների միջև կան «ընդհատումներ»
- 2) յուրաքանչյուր նույլեռտիդ կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում
- 3) միևնույն ամիսնաթրուն կարող է գաղտնազրկել մեկից ավելի եռյակներով
- 4) բոլոր օրգանիզմներում նույն եռյակները պայմանավորում են նույն ամիսնաթրուն

**22**

**Որտե՞ղ են սինթեզվում ծարակերը ճեղքավորող ֆերմենտները.**

- 1) ողորկ էնդոպլազմային ցանցի վրա
- 2) լիզոսոմներում
- 3) հատիկավոր էնդոպլազմային ցանցի վրա
- 4) պերօքսիսոմներում

**23**

**Ի՞նչ է տեղի ունենում տետրապլոիդ բջջի միտոտիկ բաժանման ժամանակ.**

- 1) առաջանում են չորս տետրապլոիդ բջիջներ
- 2) առաջանում են երկու տետրապլոիդ բջիջներ
- 3) առաջանում են չորս դիպլոիդ բջիջներ
- 4) առաջանում են երկու դիպլոիդ բջիջներ

**24**

**Կրկնակի բեղմնավորման ժամանակ ի՞նչ է զարգանում ծաղկավոր բույսերի սաղմնապարկի պատից.**

- 1) սերմնամաշկ
- 2) պտղապատ
- 3) պտուղ
- 4) սերմ

**25**

**Ո՞ր ժամանակահատվածում են քրոմոսոմները գտնվում չկրկնապատկած վիճակում.**

- 1) ինտերֆազի S փուլից մինչև անաֆազ
- 2) ինտերֆազի սկզբից մինչև պրոֆազ
- 3) պրոֆազի վերջից մինչև անաֆազ
- 4) անաֆազից մինչև ինտերֆազի S փուլը

26

Ո՞ր պնդումն է ճիշտ նշտարիկի երկշերտ սաղմի առաջացման վերաբերյալ.

- 1) սաղմնային սկավառակը ճեղքում է երկու թերթիկի. արտաքին՝ էկտոդերմի և ներքին՝ էնտոդերմի
- 2) վեգետատիվ քևեռի բջիջները սողում են դեպի անիմալ քևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են էնտոդերմը
- 3) անիմալ քևեռի բջիջները սողում են դեպի վեգետատիվ քևեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են երկշերտ սաղմը
- 4) երկշերտ սաղմն առաջանում է բլաստուլի պատի ներփքումով բլաստուլի խոռոչի մեջ

27

Ինչպիսի՞ ձևեր են առաջանում երկինտերոզիզոտ առանձնյակի և հոմոզիզոտ դոմինանտ առանձնյակի խաչասերման արդյունքում՝ երկու ավելներով էլ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային
- 2) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային
- 3) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային
- 4) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային

28

Ո՞ր հիվանդության դեպքում է կանանց մոտ բացակայում զույգ X քրոմոսոմներից մեկը.

- 1) «մլավոցի սինդրոմ»
- 2) ալբինիզմ
- 3) Շերեշևսկու և Թերների սինդրոմ
- 4) Քլայնֆելտերի սինդրոմ

29

Ինչպիսի՞ գենոտիպեր են ունեցել ծննդները, եթե այդ ընտանիքում բոլոր տղա երեխաները դալտոնիկ են, իսկ աղջիկները՝ դալտոնիզմի գենը կրողներ են.

- 1)  $X^D X^D$  և  $X^D Y$
- 2)  $X^d X^d$  և  $X^D Y$
- 3)  $X^D X^d$  և  $X^d Y$
- 4)  $X^D X^d$  և  $X^D Y$

30

Որքա՞ն է ոլորի սերմերի կանաչ գույնը և հարթ մակերևույթը պայմանավորող գենոտիպերի առավելագույն թիվը.

- 1) 4
- 2) 2
- 3) 3
- 4) 9

31

Ո՞ր պնդումն է սխալ մրջյունների վերաբերյալ.

- 1) մրջյունների էգերի բոլոր քշիցներն ունեն քրոմոսոմների դիպլոիդ հավաք
- 2) մրջյունների սպերմատոզոփիդների զարգացումն ընթանում է առանց մեյօզի
- 3) մրջյունների արուները զարգանում են կուսածնության միջոցով և ունեն քրոմոսոմների հավալույթ հավաք
- 4) մրջյուններն ունեն մեկ գույգ սեռական քրոմոսոմ

32

Ո՞ր օրգանիզմները կարող են նասմակցություն ունենալ կենսացենոզում առաջնային արտադրանքի ստեղծման մեջ.

- 1) ամոնիֆիկացնող բակտերիաները
- 2) վիրուսները և բակտերիաները
- 3) քեմոսինթեզող բակտերիաները
- 4) սնկերը և բույսերը

33

Ո՞րն է կենսագենետիկական օրենքի էռությունը.

- 1) օնտոգենեզը ֆիլոգենեզի համառոտ կրկնությունն է
- 2) չի բացահայտում օրգանիզմների միջև եղած ազգակցական կապերը
- 3) անհատական զարգացման ընթացքում կրկնվում են էվոլյուցիայի բոլոր փուլերը
- 4) ֆիլոգենեզը օնտոգենեզի համառոտ կրկնությունն է

34

Նշված օրգանիզմներից ո՞րը չի հանդիսանում երկրորդ կարգի կոնսումենտ.

- 1) խոլերայի հարուցիչը
- 2) մարդը
- 3) օմելան
- 4) սարացենիան

35

Տեսակի ո՞ր չափանիշն է քոյլ տալիս տարրերել տեսակներն ըստ որոշակի սպիտակուցների և նույզեինաքրուների կառուցվածքի և կազմի.

- 1) գենետիկական
- 2) ձևաբանական
- 3) ֆիզիոլոգիական
- 4) կենսաքիմիական

36

Ի՞նչն է հանդիսանում շարժական ընտրության արդյունք.

- 1) հին տեսակների պահպանումը
- 2) պոպուլյացիայի առանձնյակների ֆենոտիպային միատարրությունը
- 3) նոր տեսակների ի հայտ գալը
- 4) ռեակցիայի նորմայի պահպանումը

(37-38) Պոմիդորի պտղի կլոր ձևը դոմինանտում է տաճաճակի նկատմամբ:

Դաշտում եղած քոյսերից 720-ը ունի կլոր ձևի պտուղներ, իսկ 244-ը՝ տաճաճ։

37

Քոյսերից քանի՞սն են հոմոզիգոտ, եթե դաշտում եղած քիերը ստացվել են միևնույն ծնողական ձևերից։

- 1) 244
- 2) 480
- 3) 484
- 4) 720

38

Քոյսերից քանի՞սն են հետերոզիգոտ, եթե դաշտում եղած քիերը ստացվել են միևնույն ծնողական ձևերից։

- 1) 244
- 2) 480
- 3) 484
- 4) 720

(39-40) Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու մարմնից գոլորշիացավ 0,5 կգ քրտինք: 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կԶ էներգիա:

39

Քանի՞ կԶ էներգիա հեռացավ օրգանիզմից քրտինքի գոլորշիացման հետևանքով.

- 1) 8800
- 2) 1,23
- 3) 500
- 4) 1225

40

Սուտավորապես քանի՞ Ջոուլ էներգիա հեռացավ մաշկի 1 ամ<sup>2</sup> մակերեսույթից.

- 1) 440-587
- 2) 25-33
- 3) 61-82
- 4) 272-363

41

Ո՞ր գործընթացը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանիզում (նշված է աջ սյունակում) է իրականանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործընթաց

Օրգանիզ

- |  |                  |
|--|------------------|
| A. լուսային էներգիայի կլանում  | 1. կորիզակ       |
| B. այստեղ են առաջանում պերօքսիտոմները                                  | 2. քլորոպլաստ    |
| C. ոիրոսումների մեծ և փոքր մասերի ձևավորում                            | 3. Գոլցիի ապարատ |
| D. կազմված է խմբերով դասավորված և ծայրերին բշտիկներ ունեցող խոռոչներից | 4. միտոքոնդրիում |
| E. պլազմալեմի նորոգում   |                  |
| F. ներքին թաղանթի կատարների վրա պրոտոնային պոտենցիալի առաջացում        |                  |
| G. մոլեկուլային բժվածնի առաջացում                                      |                  |
| H. ածխաթթու գազի կապում  |                  |

42

Ի՞նչ համապատասխանություն կա տարրեր կենդանիների (նշված է ձախ սյունակում) և դրանց հետսաղմնային զարգացման ձևերի (նշված է աջ սյունակում) միջև։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

**Կենդանի**

**Հետսաղմնային զարգացման ձևերը**

- |               |                                       |
|---------------|---------------------------------------|
| A. մրջյուն    | 1. լրիվ կերպարանափոխությամբ զարգացում |
| B. աղոթարար   | 2. ուղղակի զարգացում                  |
| C. գորտ       | 3. թերի կերպարանափոխությամբ զարգացում |
| D. բազմուտանի |                                       |
| E. ճպուռ      |                                       |
| F. տղրուկ     |                                       |
| G. մողես      |                                       |

43

Ո՞ր կենդանուն (նշված է աջ սյունակում) կենսագործունեության ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

**Կենսագործունեության առանձնահատկություն**

**Կենդանի**

- |   |           |
|---|-----------|
| A. քնորոշ է ողնուցի առկայությունը                               | 1. մողես  |
| B. սիրտը եռախորշ է  | 2. աղավնի |
| C. արյունը թթվածնով հարստանում է ներշնչման և արտաշնչման ժամանակ |           |
| D. ունեն առրտայի աջ և ձախ աղեղներ                               |           |
| E. ունեն երկու զույգ հնգամատ վերջույթներ                        |           |
| F. քնորոշ է օդապարկերի առկայությունը                            |           |
| G. քնորոշ է կտննառքի առկայությունը                              |           |
| H. ունեն երկխորշ՝ գեղձային և մկանային ստամոքս                   |           |

44

Մարդու օրգանիզմի ո՞ր գործառույթը կամ բնութագիրը (նշված է ձախ սյունակում) նեֆրոնի ո՞ր բաղադրիչն (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

#### Գործառույթ կամ բնութագիր

- A. Երկրորդային մեզի տեղափոխում դեպի երիկամի ավագան
- B. միանալով նման խողովակների հետ, ընդհանուր ծորանով բացվում է բուրգի գագաթային մաս
- C. գտնվում է երիկամի կեղևային շերտում, պատը կազմված է երկու շերտերից, իսկ ներսում գտնվում է մազանոբային կծիկը
- D. օրգանիզմին անհրաժեշտ նյութերի հետադարձ ներծծում
- E. առաջնային մեզի առաջացում
- F. կծիկը իջնում է միջուկային շերտ, որտեղից ծնկածն ոլորվում է և բարձրանում կեղևային շերտ

#### Նեֆրոնի բաղադրիչ

- 1. հավաքող խողովակ
- 2. ոլորուն խողովակ
- 3. նեֆրոնի պատիճ

45

Մարդու նյարդային համակարգի ո՞ր բաժնին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

#### Առանձնահատկություն

- A. զրգիռներն արագ են հաղորդվում
- B. նյարդաթելերը պատված չեն միելինային բաղանթով
- C. չունի հատուկ կենտրոնաձիգ զգացող ուղիներ
- D. զրգիռները դանդաղ են հաղորդվում
- E. նյարդավորում է կմախքային միջաձիգ զոլավոր մկանները
- F. բաժինների ազդեցությունն օրգանների վրա հակադիր է
- G. նյարդաթելերն ավելի հաստ են

#### Նյարդային համակարգի բաժին

- 1. ինքնավար
- 2. մարմնական

46

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում սպերմատոզենեզի գործընթացները:  
Նշել ճիշտ հերթականությունը.

1. կոնյուգացիա և տրամախաչում
2. առաջին կարգի սպերմատոցիտների առաջացում
3. դիպլոիդ բջիջների բաժանում՝ միտոզով և սկզբնական սեռական բջիջների թվի ավելացում
4. սպերմատոզոյիդների ձևավորում
5. սպերմատիդների առաջացում
6. բջիջների աճ, ԴՆԹ-ի կրկնապատկում
7. կրկնակի քրոմատիդներից կազմված քրոմոսոմների հավլույթ հավաքակազմով բջիջների առաջացում

47

Ի՞նչ հաջորդականությամբ են կենդանիների էվոլյուցիայի ընթացքում առաջացել հետևյալ արտմորֆոզները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մարմնի երկրորդային խոռոչի առաջացում
2. սեռական բազմացում
3. հատվածավորված վերջույթների առաջացում
4. բազմաբջայնություն
5. մարմնի երկկողմանի համաչափություն

48

Ինչպիսի՞ն է գործընթացների հաջորդականությունն անձրևորդի բազմացման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. կցորդի շարժում մարմնի երկայնքով դեպի գլխային ծայր
2. կցորդի կարծրացում և վերածում բոժոժի
3. երկու առանձնյակների հպում, սերմնահեղուկների փոխանակում
4. ձվաբջիջների բեղմնավորում
5. գոտու վրա լորձային կցորդի առաջացում
6. ձվաբջիջների և սերմնահեղուկի անցում կցորդի մեջ

49

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու տեսողական վերլուծիչի գործառույթի իրականացման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ցանցաթաղանթի ընկալչական բջիջների գրգռում
2. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղև
3. լույսի ճառագայթների բեկում ակնաբյուրեղով անցնելիս
4. լույսի ճառագայթների անցում աչքի խցիկների հեղուկով
5. լույսի ճառագայթների արտացոլում առարկայի մակերևույթից
6. լույսի ճառագայթների անցում եղջերաթաղանթով
7. տեսողական զգայության ձևավորում

50

Ի՞նչ հաջորդական պրոցեսներից է կազմված մարդու շնչառությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը՝ սկսելով ներշնչման պրոցեսի սկզբից.

1. կրծքավանդակի ծավալի փոքրացում
2. արտաշնչում
3. կրծքավանդակի ծավալի մեծացում ուղղաձիգ ուղղությամբ
4. կողոսկրերի բարձրացում
5. միջկողային մկանների բուլացում
6. միջկողային մկանների կծկում
7. ստոծանու գմբեթների իջեցում
8. գազափոխանակություն բոքերում
9. մթնոլորտային օդի անցում շնչափող

51

Մարդու օրգանիզմում ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում ճարպերի փոխակերպման գործընթացները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ճարպերի ներթափանցում ավշային մազանոթներ
2. ճարպերի կուտակում ենթամաշկային բջջանքում
3. ճարպերի ճեղքում մարսողական ֆերմենտների ազդեցությամբ
4. բարակ աղիների թափիկների էալիթելի բջիջներում օրգանիզմին բնորոշ ճարպերի սինթեզ
5. ճարպերի ներթափանցում արյան մեջ
6. ճարպաթթուների և գլյուերինի ներթափանցում բարակ աղիների թափիկների պատը կազմող բջիջներ

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. պլազմային թաղանթի փոխադրիչները կարող են միաժամանակ տեղափոխել մի քանի մասնիկներ
2. կորիզավոր բջիջների էկտոպլազմային բնորոշ է տուրովին սպիտակուցից կազմված միկրոխողովակների առկայությունը
3. կապտականաչ ջրիմուները պարունակում են քլորոֆիլ, որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պատճառով դրանց ֆոտոսինթեզն ուղեկցվում է թթվածնի անջատումով
4. ԴՆԹ-ի կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդները իրենց կառուցվածքով և կազմով չեն տարբերվում ՈՆԹ-ների կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդներից
5. կարիոպլազման ներկայացնում է կորիզի ներքին միջավայրը
6. վարսանդի սպիր վրա փոշեհատիկը ծլում է և առաջացնում սաղմնապարկ, որում ձևավորվում են ուր բջիջներ
7. պլազմալեմի լիպիդային երկշերտում լիպիդների ճարպաթթվային «պոչիկներն» ուղղված են դեպի արտաքին հատված, իսկ լիպիդների «գլխիկները»՝ դեպի ներքին կողմները

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ժառանգվում են արտաքին պայմանների նկատմամբ հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմանները
2. մեղուզան, սրատուտը, լճախսունջը, ինֆուզորիան, պոլիա հիդրան երկշերտ օրգանիզմներ են
3. դրոզոֆիլի աչքի գույնն առատումային հատկանիշ է, և այն պայմանավորող գենը գտնվում է Յ քրոմոսոմում
4. բրախիդակտիլիան պայմանավորված է գենոտիպում ռեցեսիվ գենի առկայությամբ, որը պայմանավորում է կմախրի զարգացման խանգարումներ և ռեցեսիվ հոմոզիգոտների մոտ հանգեցնում է մահվան
5. թռչունները, սողունները և պոչավոր երկկենցաղները օժտված են արական հոմոզամետությամբ
6. անեռուալիդիան քրոմոսոմների հավլոխի քանակի բազմապատիկ փոփոխումն է

54

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ձմերուկի սերմի հիմնական պաշարանյութերը գտնվում են Էնդոսպերմում
2. օձերի միզապարկը լավ զարգացած չէ
3. կետերի և դելֆինների հոտառությունը բույլ է զարգացած
4. ձկների առջևի ուղեղից դուրս են զալիս տեսողական նյարդերը
5. ինֆուզորիայի օրգանիզմից սննդի չմարսված մնացորդները հեռացվում են արտազատող անցքով
6. անձրևորդերի արտաքրորության համակարգը ներկայացված է 2 զույգ խողովակներով, որոնք դեպի դուրս են բացվում արտաքրորության անցքերով

55

## Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

1. հետսինապային թաղանթը աքսոնի վերջավորության թաղանթն է
2. վարոլյան կամքում տեղակայված են ակնագնդերի և դիմախաղի մկանների շարժումները կարգավորող կենտրոնները
3. միջին ուղեղի կորիզները կարգավորում են ծարավը, ջերմակարգավորումը, շնչառությունը, արյան ճնշումը
4. ողնուղեղային նյարդերի հետևի արմատիկները ձևավորված են շարժողական նեյրոնների աքսոններով
5. սիմպաթիկ նյարդերով հաղորդվող նյարդային ազդակները հանգեցնում են սրտի պսակաձև անորների լայնացմանը
6. մակերիկամներում արտադրվում է երկրորդային սեռական հատկանիշների զարգացմանը նպաստող հորմոններ
7. ներքին ականջի խխունջում տեղակայված է մազիկավոր բջիջներից կազմված կորտյան օրգանը

56

## Նշել բոլոր սխալ պնդումները.

1. զուգահեռության օրինակ է կոլիբրիի և իլիկարիթեռի նմանատիպ բերանային ապարատների ձեռք բերումը
2. օղը վատ ջերմահաղորդիչ է, ինչը հեշտացնում է օրգանիզմում առաջացող ջերմության պահպանումը
3. քարածուխը, կրային ապարները, մթնոլորտի կազմի մեջ մտնող գագերը կենսահանքային նյութեր են
4. Էպիֆիտ բույսերը օգտագործում են ծառերը որպես հենարան և ոչ թե սննդանյութերի աղբյուր
5. կույր օձերի և վիշապների վերջույքների մնացորդները ուղիմենտներ են
6. պոպուլյացիայի խտության օպտիմալից պակաս նվազումը հանգեցնում է պաշտպանական ռեակցիաների ուժեղացմանը

## **Նշել բոլոր սխալ պնդումները.**

1. գորշ մարմին ունեցող երկու հետերոգիզոտ դրոզոֆիլ ճանճերի խաչասերումից ստացված սերնդում կառաջանան գորշ և սև մարմնով առանձնյակներ՝ 1:1 հարաբերությամբ
2. կողոմինանտության դեպքում հետերոգիզոտ առանձնյակներում դրսնորվող հատկանիշն ալելային գույզի երկու գեների գործունեության հետևանք է
3. Էպիստագ առաջացնող գեները կոչվում են խթանիչ և դրանք կարող են լինել միայն ռեցեսիվ
4. պլեյոտրոպիայի օրինակ է այն երևոյթը, երբ ոլորի ծաղկների սպիտակ գունավորումը որոշող գենը պայմանավորում է նաև ցողունի սպիտակավուն երանգը
5. բնական ընտրությունը էվոլյուցիայի շարժիչ ուժ է
6. բողոքմամբ բազմանում են հիդրաները և բարձրակարգ բույսերը

## **Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.**

1. բոքային զարկերակներով հոսում է երակային արյուն
2. մարդու արյան խումբը պայմանավորում են A և B ագլյուտինոգենները, α և β ագլյուտինինները և ռեզուս գործոնը
3. հաստ արու բաժիններն են՝ զատաղի, կույր աղի, խթաղի
4. պարասիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցությամբ ուժեղանում է ջրի հետադարձ ներծծումը և մեզը պակասում է
5. ավիշը անգույն, թափանցիկ հեղուկ է, կազմում է օրգանիզմի զանգվածի մոտ 30 %-ը
6. կրծքավանդակի պատը ներսից պատված է առպատային թոքամզային թաղանթով

59

Ֆուտոսինթեզի պրոցեսում բազմամյա մեկ ծառը 30 օրվա ընթացքում (16-ժամյա լուսային օր) արտադրել է 50176 լ քրվածին: 1 մղ զազը գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ: Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը ( $m^2$ ):

60

Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման արդյունքում գոլորշիացման միջոցով հեռացել է 4605 կԶ էներգիա և մնացել է 26 մղ կարնաքրու: Հայտնի է, որ քրտնարտադրության վրա ծախսվել է գլյուկոզի ճեղքման արդյունքում անջատված ջերմային էներգիայի 25 %-ը: Ընդունել, որ 1 մղ գլյուկոզից մինչև կարնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կԶ և ԱԵՖ-ի մինչև ԱԿՖ ճեղքման արդյունքում անջատվում է 30 կԶ էներգիա: Որոշել ամբողջ պրոցեսի օգտակար գործողության գործակիցը (%-ով): Պատասխանում ատորակետից հետո պահպանել մեկ թիվ և պատասխանը բազմապատկել 10-ով:

- (61-63) Ծանր ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու քոքերում արյան մեջ դիֆուզվել է 1012,5 լ քրվածին: Ընդունել, որ աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,5 անգամ, օրգանիզմում յուրացվող քրվածնի ծավալն աճել է 25 %-ով, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտանորդած արյան ծավալը՝ 1,4 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 18 շնչառական շարժում, շնչառական օդի ծավալը 600 մլ է, սրտի բոլորաշրջանի տևողությունը՝ 0,8 վրկ և մեկ կծկման ժամանակ փորոքն արտանորդում է 65 մլ արյուն:

61

Քանի՞ րոպե է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

62

Աշխատանքի ընթացքում քանի՞ լիտր քրվածին է ստացել երիկամը: Ընդունել, որ երիկամները ստանում են մեծ շրջան մղված արյան ծավալի 20%-ը: Պատասխանը քազմապատկել 100-ով:

63

Որոշել մեկ օրվա ընթացքում սրտից արտանորդած արյան ծավալը:

(64-65) Էկոհամակարգ մտնող էներգիայի միակ աղբյուրն Արեգակնային լույսն է, որի գումարային էներգիան մեկ տարվա ընթացքում կազմում է  $6,4 \cdot 10^8$  կԶ: Ֆուսուսինթեզի օգտակար գործողության գործակիցը հավասար է 1,2%: Էկոհամակարգում ընդգրկված են սննդային չորս մակարդակներ՝ բույսեր - բուսակեր կենդանիներ - գիշատիչներ - գիշատիչների մակարույժներ:

64

Չանի<sup>o</sup> մակարույժ կարող է սնվել տվյալ համակեցության գիշատիչների հաշվին, եթե մեկ մակարույժի զանգվածը 1 գ է, իսկ մակարույժների 1 կգ գումարային զանգվածում պարունակում է  $4 \cdot 10^4$  կԶ էներգիա: Ընդունել, որ յուրաքանչյուր մակարդակում կուտակվում է օգտագործված սննդի էներգիայի 10%-ը:

65

Որոշել էներգիայի կորուստը (կԶ) սննման շղթայի գիշատիչներ - գիշատիչների մակարույժներ օղակում:

(66-68)  $2,672 \cdot 10^{-12}$  գ զանգվածով բակտերիայի բջջում պարունակվում է 20000 ռիբոսում, որոնց ընդհանուր զանգվածը կազմում է բակտերիայի զանգվածի 2,5%-ը:

66

Քանի՞ դալտոն է կազմում մեկ ռիբոսումի միջին զանգվածը: Հաշվի առնել, որ 1 դալտոնը հավասար է  $1,67 \cdot 10^{-24}$  գ: Պատասխանը բաժանել 1000-ի:

67

Սպիտակուցի քանի՞ մոլեկուլ կա մեկ ռիբոսում, եթե սպիտակուցի միջին մոլեկուլային զանգվածը 25000 դալտոն է և սպիտակուցների ընդհանուր զանգվածը կազմում է ռիբոսումի զանգվածի 50%-ը:

68

Քանի՞ նուկլեոտիդից է բաղկացած ռիբոսումի սպիտակուցը կողավորող գենը, եթե մեկ ամինաթթվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 100 դալտոն է:

**Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.**

1. Վեզը ուսնաբարի ամենափոքր ոսկրն է
2. պարանոցային առաջին ողն ունի մարմին և երկու հոդաելուստներ, որոնց վրա հենվում է գանգը
3. ազդրի քառագլուխ մկանն ու նստատեղի մկանները գործելով որպես հակազդիչներ՝ ֆիքսում են կոնքազդրային հոդերը՝ պահելով մարմինն ուղղաձիգ դիրքում
4. կողոսկրերը կրծոսկրին միացած են կիսաշարժուն միացմամբ
5. ներքին միջկողային մկաններն իրականացնում են արտաշնչումը
6. աջ և ձախ կրծոսկրաանրակապտկաճ մկանների միաժամանակ կծկվելու դեպքում նրանք հանդես են գալիս որպես սիներգիստներ և իջեցնում են գլուխը

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.**

1. Չրի հետ փոխազդեցության արդյունքում մակրոէրգիկ կապերից մեկը ճեղքվում է, և ԱԵՖ-ը ձևափոխվում է ԱԿՖ-ի
2. Կորիզավոր բջիջներում գլիկոլիզի արդյունքում առաջացած պիրոխաղողաթթուն թթվածնի քավարար քանակության պայմաններում անցնում է միտոքոնդրիումներ և ենթարկվում հետագա ճեղքման, որի արդյունքում առաջնում է կաթնաքրո
3. Ֆոտոսինթեզի մթնային փուլի ռեակցիաներին մասնակցող ոիբուզարիֆոսֆատ-կարբօքսիլազ ֆերմենտի մոլեկուլները գտնվում են իիմնականում քլորոպլաստի գրաններում
4. Միտոքոնդրիումների ներքին թաղանթում կան ներկառուցված ԱԵՖ-սինթազ ֆերմենտի մոլեկուլներ, որոնք կարող են ԱԿՖ-ից և ֆոսֆորական թթվից սինթեզել ԱԵՖ
5. ԱԵՖ-ի կառուցվածքում ածխաջրային մնացորդի և ֆոսֆորական թթվի միջև առկա կապի մեջ պահեստավորված է մեծ քանակությամբ էներգիա, այդ պատճառով այդ կապը կոչվում է մակրոէրգիկ
6. Գլյուկոզի ճեղքավորման թթվածնային փուլում  $\text{NADH}_2$ -ի և  $\text{FADH}_2$ -ի պրոտոնների և էլեկտրոնների վերջնական ակցեպտորը մոլեկուլային ջրածինն է